ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2017թ.

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2017 թվականի հունվարի 9-ի թիվ 02/11.5/66-17 հանձնարարականի՝ ներկայացվում է ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիրը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

«Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարությանը հավանության տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը

ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերական խնդիրները հաստատելու մասին>> թիվ 131-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 36-րդ կետով սահմանված՝ «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությանը հավանության տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակման աշխատանքներն իրականացվել են միջոցառումների ժամանակացույցով սահմանված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 29.07.2016թ. N 29 արձանագրային որոշմամբ:

Ռազմավարության իրականացման արդյունքում.

- 2025 թվականի դրությամբ, առանձին վերցված, յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 %-ը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70 %-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավելի քան 30 %-ը:
- 2025 թվականի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակը կաճի առնվազն 10%-ով՝ համեմատած 2014 թվականի հետ:

Տարածքային զարգացումը Հայաստանում կկենտրոնանա մի շարք առաջնահերթությունների վրա, որոնք են՝ քաղաքային զարգացման բևեռների հիմնում,

տեղական ու տարածքային տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավում, տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ներդրումներ մարդկային կապիտալում և սոցիալական ենթակառուցվածքում, զբոսաշրջության խթանում, ինչպես նաև տարածքային զարգացման կառավարման կարողությունների ամրապնդում:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

«Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը

ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 38-րդ կետի կատարման նպատակով՝ մշակվել և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 49 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

Հավանության արժանացած Ռազմավարությամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահապանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի շարունակականության ապահովում (գերակա խնդիր)

Մշակվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Հունիսի 17-ին ՀՀ Ազգային

ժողովն ընդունել է վերոնշյալ օրենքները, որոնց համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի ***Ուրցաձոր***, ՀՀ Շիրակի մարզի ***Ամասիա***, ***Աշոցք***, ***Սարապատ***, ***Արփի***, ՀՀ Սյունիքի մարզի ***Գորիս***, ***Մեղրի***, ***Տեղ***, ***Գորայք***, ՀՀ Վայոց ձորի մարզի ***Վայք***, ***Ջերմուկ***, ***Զառիթափ***, ՀՀ Տավուշի մարզի ***Նոյեմբերյան***, ***Այրում, Կողբ*** համայնքներում համայնքների միավորման միջոցով ձևավորվել են համայնքային փնջեր: Թվով 118 համայքների միավորման արդյունքում ձևավորվել են թվով 15 համայնքներ: Այսպիսով, իրականացվել են համայնքների խոշորացման 18 ծրագրեր, ինչի արդյունքում 140 համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է թվով 18 համայնք:

Համայնքների բնակիչներին, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է տեղեկատվություն՝ համայնքների խոշորացման նպատակների, առավելությունների, ռիսկերի վերաբերյալ: Վեր են հանվել և գույքագրվել այդ համայնքների բոլոր հիմնախնդիրները՝ ըստ առաջնահերթության, հետագա ծրագրերում ընդգրկելու նպատակով: Մինչև ՀՀ Ազգային Ժողովի քննարկումները շահագրգիռ համայնքների ՏԻՄ-երի մասնակցությամբ կազմակերպվել և անց կացվել են խորհրդարանական լսումներ:

Խոշորացվող համայնքներում իրականացվել են վերլուծություններ՝ համայնքային փնջերի ծրագրային առաջնահերթությունների վերաբերյալ, ինչի արդյունքում հրապարակվել է այդ վերլուծությունների ամփոփ հաշվետվությունը (այն զետեղված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքում):

Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում կիրականացվեն ներդրումային ծրագրեր խոշորացվող համայնքներում՝ ԱՄՆ ՄԶԳ (8.6 մլն ԱՄՆ դոլար) և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալության (2,4 մլն ԱՄՆ դոլար) ֆինանսավորմամբ:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ երեք միավորված համայնքները՝ Դիլիջան, Տաթև և Թումանյան, շուտով կստանան տեխնիկական լուրջ վերազինում:

Թումանյան համայքը կստանա 1 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, մեկ բեռնատար մեքենա, մեկ ժամանակակից աղբատար, երեք միկրոավտոբուս: Համայնքի 6 բնակավայրերում կկառուցվեն 6 ավտոբուսային կանգառներ, իսկ Երևան տանող մայրուղու վրա՝ մեկ բազմաֆունկցիոնալ կանգառ-շուկա: Համայնքի համար կկառուցվի մեքենաների և տեխնիկայի կայանատեղ: Թումանյան համայնքի բոլոր գյուղերում այսուհետև կիրականացվի մշտական աղբահանություն:

Տաթև համայնքի համար կգնվի մեկ բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, մեկ ավտոգրեյդեր, մեկ ինքնաթափ բեռնատար, երկու հացահատիկ հավաքող կոմբայն և մեկ աղբատար մեքենա, բոլոր գյուղերում կդրվեն աղբամաններ և կիրականացվի մշտական աղբահանություն:

Դիլիջան միավորված համայնքին կտրամադրվեն մեծ թվով մեքենաներ և տեխնիկա, մասնավորապես՝ երկու բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, երեք բեռնատար ինքնաթափ, երեք աղբ հավաքող մեքենա, մեկ ավտոգրեյդեր, քաղաքային կոմունալ մեկ ձյուն մաքրող և մեկ փոշեկուլ կոմունալ մեքենա, ամբողջովին կփոխարինվեն Դիլիջան քաղաքի արտաքին լուսավորության հին սարքերը և երկու տարի հետո մենք կունենանք լիովին ժամանակակից լուսադիոդներով լուսավորված համայնք՝ Դիլիջան քաղաքով և 6 գյուղերով: Այս տարվա դեկտեմբեր ամսից Դիլիջանի, Թեղուտի, Հաղարծինի և Գոշի դպրոցներում իրենց աշխատանքն են սկսել ինժեներական լաբորատորիաները, որտեղ արդեն սովորում են 170 ապագա ծրագրավորողներ, եռաչափ նախագծող-ինժեներներ և ռոբոտային տեխնիկայի մասնագետներ:

2017 թվականին համանման տեխնիկական վերազինում կիրականացվի ևս 15 միավորված համայնքներում, որի շնորհիվ մենք կարձանագրենք համայնքային կարողությունների լուրջ աճ: Համայնքները այսուհետև իրենց տրամադրության տակ ունենալով անհրաժեշտ գործիքակազմ, իրենք կլուծեն իրենց հարցերն ու կբավարարեն կոմունալ կարիքները: Սա շատ լուրջ առաջընթաց կլինի համայնքների ինքնուրույնության բարձրացման և կարողությունների հզորացման գործում:

Առանձին աշխատանքային խմբեր զբաղվում են խոշորացվող համայնքներում ընդհանուր տեղեկատվական ցանցի ստեղծման աշխատանքներով, ինչի նպատակն է՝ բնակիչների համար ստեղծել առավել նպաստավոր պայմաններ՝ տեղում ծառայություններից օգտվելու համար:

Մեղրի, Գորիս, Զառիթափ, Վայք, Ջերմուկ և Ուրցաձոր խոշորացված համայնքներում գործարկվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի՝ (ՀԿՏՀ) խոշորացված համայնքի համար մշակված տարբերակը: Տեղեկատվական այս համակարգը, որում ներառվում են համայնքապետարանի գործառույթներին առնչվող տեղեկատվության կենտրոնացված շտեմարանները, հնարավորություն է ընձեռում մեկ ընդհանուր տեղեկատվական միջավայրում ներառել համայնքի կենտրոնի և վարչական

ներկայացուցիչների գրասենյակները, բնակիչներին տրամադրել տարբեր տեղեկանքներ՝ համայնքի բոլոր բնակավայրերից:

<u>«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</u>

Նախատեսվում է պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների բաշխման նոր մեխանիզմ, բնակչության թվից առավելապես կախված բաշխումից անցում է կատարվում բազմագործոն բաշխման, լրացուցիչ հաշվի առնելով համայնքների տրանսպորտային հասանելիությունը (մարզկենտրոն, Երևան), բարձրադիրությունը, համայնքում ընդգրկված բնակավայրերի քանակը, բնակչության տարիքային կազմը, մասշտաբի էֆեկտը: Անցումային էտապի հիմքում դրված է 2016թ. փաստացի դոտացիայի ծավալից չնվազելու սկզբունքը, նոր տրամաբանությամբ բաշխվում է հավելաճը: ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 2016թ. հոկտեմբերի 20-ին: 2017 թվականին հատկացվելիք համահարթեցման դոտացիաները հաշվարկվելու են նոր օրենքի բանաձևով:

<u>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</u>

Այն անդրադառնում է ինչպես Հայաստանի Հանրապետության 2015թ. Սահմանադրությունից բխող փոփոխություններին և լրացումներին, այնպես էլ առավել լայն մասշտաբով օրենսդրական կարգավորումների փոփոխություններին և լրացումներին, որոնք պայմանավորված են Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայով, Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությամբ (Ուտրեխտի արձանագրություն), ինչպես նաև միջազգային լավագույն փորձով: ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին:

<u>«Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 6-րդ համաժողովի նախապատրաստման ու անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:</u>

Հաշվի առնելով այն, որ 2016 թվականին հանրապետությունում նշվում է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 20-ամյա հոբելյանը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը առաջարկել է Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 6-րդ համաժողովի փոխարեն կազմակերպել հոբելյանական ընդունելություն՝ ապահովելով տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, մասնավորապես՝ համայնքների ղեկավարների լիակազմ մասնակցությունը, ինչը հնարավոր չէր լինի համաժողովի շրջանակներում:

ՀՀ կառավարության կողմից այդ առաջարկությունն ընդունվել է ի գիտություն: Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 20-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը և հոբելյանական միջոցառումները կազմակերպվեցին 2016 թվականի նոյեմբերի 15-ին՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: